ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 09/21

26.04.2021թ. ք. Երևան

«Մաքուր Երկաթի Գործարան» ԲԲ ընկերությունը (այսուհետ՝ Դիմող, ներկայացուցիչ՝ փաստաբան Նարեկ Քոչարյան) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան (այսուհետ՝ Սահմանադրական դատարան) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը (այսուհետ՝ Սահմանադրություն) համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 134-րդ հոդվածի 6-րդ մասի համապատասխանությունը Սահմանադրության 28-րդ, 29-րդ հոդվածներին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին և 78-րդ հոդվածին:

Ըստ Դիմողի՝ Օրենսգրքի 134-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանափակվում է պատասխանողի՝ հայցի ապահովումը լրիվ կամ մասնակի վերացնելու մասին դատարանի որոշումը բողոքարկելու հնարավորությունից, ինչի արդյունքում առանց իրավաչափ նպատակի սահմանափակվում է դատավարության մասնակիցներից պատասխանողի՝ դատարանի մատչելիության իրավունքը, ինչը հակասում է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին:

Դիմողը գտնում է, որ՝

- նորմաստեղծ գործունեությունում պետությունն իր պոզիտիվ պարտականությունն իրացնելիս չի ապահովել «արդարացի լսումներ» հասկացության անքակտելի տարրերից դատավարության կողմերի հավասարությունը և մրցակցային դատավարությունը,
- հայցի ապահովումը վերացնելու միջնորդություն ներկայացրած դատավարության մասնակիցը, չունենալով դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն

արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից,

- ապահովված չէ մրցակցային դատավարության կարևոր բաղադրատարր հանդիսացող դատավարության կողմերի հավասարությունը, ինչի արդյունքում դատավարության մի կողմի՝ մյուս կողմի համեմատությամբ ստեղծվում է անբարենպաստ վիճակ (կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքներն ամրագրված են նաև Օրենսգրքով, որի 11-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ քաղաքացիական գործերով դատավարությունն իրականացվում է օրենքի և դատարան առջև գործին մասնակցող բոլոր անձանց հավասարության սկզբունքի հիման վրա, իսկ Օրենսգրքի 13-րդ հոդվածով սահմանվում է, որ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է գործին մասնակցող անձանց մրցակցության հիման վրա…)։

- Սահմանափակվել է անձի՝ առնվազն երկու ատյանում լսված լինելու իրավունքը։

Արդյունքում, վիճարկվող նորմի կիառմամբ խախտվում է անձի՝ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունքը։

Ի տարբերություն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի, որի 130-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքի իրավունք ունեն դատավարության մասնակիցները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը 134-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանափակում է պատասխանողի՝ միջանկյալ դատական ակտի բողոքարկման իրավունքը, արդյունքում տարբերակված մոտեցում է դրսևորվում վարչական դատավարության և քաղաքացիական դատավարության մասնակցների միջև։

Ըստ Դիմողի՝ գործող կարգավորումը հակասում է նաև համաչափության սկզբունքին, քանզի տվյալ դեպքում բացակայում է իրավունքի սահմանափակման լեգիտիմությունը։

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 134-րդ հոդվածի 6-րդ մասի համապատասխանությունը Սահմանադրության 28-րդ, 29-րդ հոդվածներին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին և 78-րդ հոդվածին։

Վիճարկվող նորմի՝ Օրենսգրքի 134-րդ հոդվածի 6-րդ մասի բովանդակությունը հետևյալն է.

6. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով հայցի ապահովման միջոցը լրիվ կամ մասնակի վերացնելու մասին դատարանի որոշումը վերաքննիչ դատարան կարող է բողոքարկել այն անձը, որի միջնորդությամբ կիրառվել էր հայցի ապահովման միջոց: Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա չէ բողոքարկման:

Սահմանադրության 28-րդ հոդվածի համաձայն՝

Բոլորը հավասար են օրենքի առջև:

Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Այսպես, Օրենսգրքի 134-րդ հոդվածը վերաբերում է հայց ապահովան միջոցի վերացմանը: Նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում իր նախաձեռնությամբ կարող է վերացնել հայցի ապահովման միջոցը: Նույն հոդվածի 6-րդ հոդվածի համաձայն՝ սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (այն է՝ բացակայում են սույն օրենսգրքի հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքերը) նախատեսված հիմքով հայցի ապահովման միջոցը լրիվ կամ մասնակի վերացնելու մասին դատարանի որոշումը վերաքննիչ դատարան կարող է բողոքարկել այն անձը, որի միջնորդությամբ կիրառվել էր հայցի ապահովման միջոց: Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա չէ բողոքարկման:

Այսինքն՝ Օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով հայցի ապահովման միջոցը լրիվ կամ մասնակի վերացնելու մասին դատարանի որոշումը վերաքննիչ դատարան բողոքարկելու իրավունքը սահմանափակված է քաղաքացիական դատավարության այն կողմի համար, ով նման միջնորդություն չի ներկայացրել:

Անդրադառնալով անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներին՝ Սահմանադրական դատարանը 2007 թվականի հունվարի 16-ի ՍԴՈ–673 որոշման մեջ արձանագրել է. «8. ....Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18 հոդվածի նպատակն իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է:»:

Անդրադառնալով դատական պաշտպանության իրավունքին՝ վերադասության կարգով բողոքարկման ինստիտուտի տեսանկյունից, Սահմանադրական դատարանը 2011 թվականի փետրվարի 8-ի ՍԴՈ–936 որոշման մեջ նշել է. «5. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է.

– անձի (այդ թվում՝ իրավաբանական) իրավունքները և ազատությունները դատարանում պաշտպանելու իրավունքը,

– դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը,

– դատական պաշտպանության իրավունքը՝ հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ,

– խախտված իրավունքներն անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում և հրապարակային քննության միջոցով վերականգնելու իրավունքը:

Միաժամանակ, սահմանադրորեն նախատեսված է խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության (դրա արդյունավետության) երաշխավորման առանձնահատուկ այնպիսի ինստիտուտ, ինչպիսին վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման՝ անձի իրավունքն է (դատական բողոքարկումը (ՀՀ Սահմ. 20–րդ հոդվածի 3–րդ մաս): Վերջինս նաև անձի իրավունքների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրականացման խնդրում պետության առաջնային պարտականություն է՝ որոշակի ընթացակարգի, այդ թվում՝

դատական հնարավոր սխալների ուղղման միջոցով արդարադատության նպատակների իրագործումը։»։

Անդրադառնալով բողոքարկման ինստիտուտի էությանը՝ Սահմանադրական դատարանը 2007 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՍԴՈ–719 որոշման մեջ արձանագրել է. «5. Բողոքարկման ինստիտուտի ողջ տրամաբանությունը՝ ընդհանրապես, և արդարադատության համակարգի ներսում՝ մասնավորապես, հանգում է նրան, որ մի օղակի ապօրինի վարքագծի վիճարկումը հասցեագրված լինի բացառապես վերադաս ատյանին։ Այս տրամաբանությամբ է կառուցված ՀՀ արդարադատական համակարգի ներսում բողոքարկման ողջ մեխանիզմը»։

Անդրադառնալով նաև մարդու իրավունքների սահմանափակման հնարավորությանը, Սահմանադրական դատարանը 2006 թվականի հոկտեմբերի 4-ի ՍԴՈ–649 որոշման մեջ արձանագրել է հետևյալը. «… Սահմանադրորեն նախատեսված սահմանափակման ենթակա իրավունքների առնչությամբ, համաձայն մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, մարդու իրավունքի սահմանափակումը կարող է իրականացվել միայն օրենքով՝ երաշխավորելով համաչափությունը, չաղավաղելով իրավունքի էությունը (սահմանափակման հետևանքով իրավունքը չզրկվի իր բովանդակությունից, չվտանգվի դրա գոյությունը)։»։

Սահմանադրական դատարանը, 2007 թվականի փետրվարի 7-ի ՍԴՈ–677 որոշման մեջ անդրադառնալով համաչափության սկզբունքին, արձանագրել է հետևյալը. «Սահմանադրության 43 հոդվածի 1–ին մասում նաև անուղղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար։»։

Ստացվում է, որ օրենսդիրը պարտավոր է նախատեսել այնպիսի իրավակարգավորումներ, որոնք բացառեն անձանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների որևէ սահմանափակում, եթե այն պայմանավորված չէ Սահմանադրությամբ թույլատրելի հանգամանքներով։ Այլ կերպ, եթե որևէ իրավակարգավորման շրջանակներում խախտվում է այդ պահանջը, ապա այն դադարում

է իրավական և սոցիալական, հետևաբար՝ նաև սահմանադրական լինելուց, իսկ օրենքով համապատասխան երաշխիքների (կանոնակարգման) բացակայությամբ էլ՝ պայմաններ են ստեղծվում հակասահմանադրական իրավիճակի առաջացման համար: Հետևաբար, օրենքով պետք է նախատեսվեն այնպիսի իրավակարգավորումներ, որպիսիք արգելք չհանդիսանան (կամ՝ չսահմանափակեն) սահմանադրական իրավունքների ազատ իրացմանը, եթե այդպիսի իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում և համաչափ չէ իրավաչափ նպատակին (ՍԴՈ–1244):

Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը: Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների նպատակը իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է: Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում:

Այսինքն՝ անձը պետք է լիարժեք դատական պաշտպանության իրավունք ունենա, ապահովված լինի արդար դատաքննություն իրականացնելու պետության պարտավորությամբ, իր իրավունքների լիարժեք պաշտպանության լեգիտիմ ակնկալիքով: Հակառակ պարագայում արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացումը դառնում է ոչ մատչելի և թերի, չի բխում իրեն իրավական հռչակած պետության և

ժողովրդավարական հասարակության նպատակներից: Օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հիմքով հայցի ապահովման միջոցը լրիվ կամ մասնակի վերացնելու մասին դատարանի որոշումը վերաքննիչ դատարան բողոքարկելու իրավունքի սահմանափակումը՝ նման միջնորդություն չներկայացրած քաղաքացիական դատավարության կողմի (որպես կանոն, դա այն կողմն է, ում «դեմ» ներկայացվել է միջնորդությունը) համար, հանգեցնում է սահմանադրորեն երաշխավորված արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքների ոտնահարման, նման սահմանափակումը օբյեկտիվորեն հիմնավորված և համաչափ չէ:

Դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է, այլև այն հիմնական և էական իրավական երաշխիքը, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի և Եվրոպական կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, անձը չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից:

Օրենսդիրը սահմանափակելով այն անձի բողոքարկման իրավունքը, որի միջնորդությամբ չէ, որ կիրառվել էր հայցի ապահովման միջոցը, թերևս ելել է նրանից, որ հայցի ապահովման միջոցը լրիվ կամ մասնակի վերացնելու մասին դատարանի որոշումը բարենպաստ դատական ակտ է գործին մասնակցող այն անձի համար, ում դեմ ներկայացված հայցով կիրառվել է հայցի ապահովման միջոց, ուստի վերջինս շահագրգռված չէ բողոքարկելու այդ դատական ակտը: Մինչդեռ, օրենսդիրը հաշվի չի առել, որ դատավարության այդ մասնակիցը կարող է միջնորդել լրիվ վերացնելու հայցի ապահովման միջոցը, սակայն դատարանը կարող է որոշում կայացնել հայցի ապահովման միջոցը մասնակի վերացնելու մասին, որի դեպքում դատական ակտը միջնորդությունը ներկայացրած գործին մասնակցող անձի համար ըստ էության բարենպաստ չէ: Ուստի, գործին մասնակցող անձը, վերևում քննարկված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքն իրացնելու համար, պետք է հնարավորություն ունենա

բողոքարկելու այդ դատական ակտը՝ անկախ նրանից, թե որ կողմի միջնորդությամբ է հայցի ապահովման միջոցը կիրառվել։

Ավելին, ելնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի իրավակարգավորումներից, ստացվում է հետևյալը.

- հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին միջնորդություն ներկայացնելու իրավունք ունի գործին մասնակցող յուրաքանչյուր անձ, այդ թվում՝ այն անձը, ով ինքը չի միջնորդել դատարանին կիրառելու հայցի ապահովման միջոց (ՀՀ քաղ. դատ. օր. 134-րդ հոդվածի 1-ին մաս),
- միջնորդության քննության արդյունքներով դատարանը կայացնում է որոշում (ՀՀ քաղ. դատ. օր. 134-րդ հոդվածի 5-րդ մաս), որով կարող է լրիվ կամ մասնակիորեն բավարարել կամ մերժել գործին մասնակցող անձի միջնորդությունը հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին,
- հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին գործին մասնակցող անձի միջնոդրությունը մերժելու մասին դատարանի որոշումը չի կարող բողոքարկել այդ միջնորդությունը ներկայացրած կողմը, եթե վերջինս չի միջնորդել կիրառելու հայցի ապահովման միջոցը (ՀՀ քաղ. դատ. օր. 134-րդ հոդվածի 5-րդ մաս)։

Այսպիսի իրավակարգավորումներն արդյունավետ չեն և կարող են հանգեցնել անձի հիմնական սահմանադրական իրավունքների սահմանափակման։ Բանն այն է, որպես կանոն, հայցի ապահովման կիրառված միջոցը վերացնելու հարցում շահագրգռված դատավարական կողմը պատասխանողն է, ով կարող է միջնորդել վերացնելու հայցի ապահովման միջոցը։ Այդ միջնորդության մերժման դեպքում կարող են խախտվել պատասխանողի իրավունքներն ու օրինական շահերը, սակայն վերջինս սահմանափակված է դատական կարգով բողոքարկելու իր միջնորդության մերժումը, եթե ինքը չի միջնորդել, որպեսզի իր նկատմամբ կիրառվի հայցի ապահովման միջոց (չնայած հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդությամբ դատարանին դիմելու իրավունք ունի գործին մասնակցող յուրաքանչյուր անձ, սակայն պատասխանողը, որպես կանոն, շահագրգռված չէ միջնորդելու, որ իր նկատմամբ հայցի ապահովման միջոց կիրառվի)։ Ահա այս պայմաններում, կարծում ենք, պատասխանողի իրավունքի օրենսդրական սահմանափակումը վերադասության կարգով բողոքարկելու իր նկատմամբ կայացված անբարենպաստ դատական ակտը, չի բխում արդյունավետ

դատական պաշտպանության և արդարադատության մատչելիության սահմանադրական սկզբունքներից:

Ավելացնենք նաև, որ Կենտրոնը հիմնականում համակարծիք է անհատական դիմումում շարադրված հիմնավորումների հետ և գտնում է, որ հայցի ապահովման միջոցի վերացման մասին դատարանի որոշման բողոքարկման ինստիտուտի բովանդակությունը կազմող քաղաքացիադատավարական դրույթների սահմանադրականությունը վիճահարույց է:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 6-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 28-րդ, 29-րդ հոդվածներին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին և 78-րդ հոդվածին խնդրահարույց է:

Recoverable Signature

Համակարգող՝ X Lyudvik Davtyan *Լյուդվիկ Դավթյան*

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169